

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՈՍՏԱՆԻԿ



ԱՐԵՎԵՆԻ
ԱՐԵՎԱՊՈԼԻՍ

Պ օ Ե Դ Կ



891,99
Հ - 85

Փ ա Ե ի Գ

ճպագրութիւն «Արաբ» - Թօփալեան

1932

19 NOV 2011

ՈՍՏԱՆԻԿ

891.99

Հ-85

ԱՐԵՎԵԼԻԿ

ԱՐԵՎԱՊԼՏԻ

Պօհմա



Փարիզ

Տպագրություն «Արախ» - Թօփալեան

1932

2626

13 JUN 2013

39.656

ԱՐԵՒԵԼՔԷՆ ԱՐԵՒՄՈՒՏՔ



ՈՐՊԷՍ ՍԿԻՔ

Երկրէ երկիր եւ ծովէ ծով, ուղիներով պատահական,
Ի՞նչ երազներ եմ ծուսել ու որոնել կրկին անգամ...

Քանի՜ ազգի միջով անցել՝ սերել եմ զուր նրանց լեզուն,
Կտոր հացով կուտ խնդացել, յետոյ լացել մի այլ տեղում:

Ի՞նչ գոյնզգոյն հորիզոններ, երկինքներ գործ ու լուսաւոր
Վրաս մթնել են, լուսացել ու հետք թողել իմ արտի խոր...

Ու դար ի վեր ու դար ի վար ականջս կախ արտի զարկին
Սիրսս դարձած հազար պատառ պարզած ամէն հանդիպողին,

Շնչելով մերթ հիւսիսի ցուրտ ու հարաւի խորհակը բարկ
Տեսել եմ եւ որքան անդունդ ու պարտութիւն ու յաղթանակ:

Ո՛րքան անգամ մահուան հասել՝ անց եմ կացել մահէն անդին
Մատանայի մարջ տեսել, մասի վրայ նրա հոգին:



11186-57

Տեսել Դժոխք, Կարէ Կարաս ու Դրախտի սիրտը թափուր ,
Ուր չի հոսում էլ հեգանազ ոչ մի վնիս մահուր աղբիւր ...:

Օ՛ տեսել եմ ու գնացել տուրք բռնած ամէն նամբի ,
Ամէն նամբի վախնան տեսել, տեսել մարդիկ չորս գլխանի.

Տեսել՝ ուրբան երկիր ու հող, այնքան կենցա՛ղ ու մոլութիւն
Ու ուրբան մարդ՝ այնքան իշխող , նոյնքան աղէտ ու խնդութիւն.

Տեսել եմ ես ու գնացել , յետոյ դարձել՝ դարձել էլի
Քո դէմքումն եմ դէմքս գտել վերածնուող իմ Նայիրի :

— ողի երկրիս կապոյտը ծով, հրակատար լեռները վե՛հ,
Ու լեռներէն վա՛ր խոյացող ջրերու ջինջ ե՛րգը լուսէ՛:

Հոսատարափ դա՛շտը ծփուն, ծնծղաներով շող ու շաղի,
Արեւաթագ արտը հասուն, փա՛ռքը հողի ու հօտաղի :

Թողի հովիտն ու իր շուշան, շշուկները հարսին, հասկին,
Աղջիկներու շուրթերն ալւան, բռնկուած բոց արեգակին .

Դէմքերը նո՛ւշ ու արեւխաշ, նայածքները թէ՛ժ, խլրտուն
Ու նոր կաթնած, պտկած խաշխաշ, կրծքերն ամէն արբունքի հուն

Թողի մա՛յրս կարօտակէզ ու մօրս քով՝ իմ մանկութիւն...
Յուշը մանող իլիկի պէս երկու զմրո՛ւխտ իր աչքերում :

Արեւաթոր միջօրէում, ոսկեփոշում ճառագայթի,
Զբվե՛ժներու ճա՛խքը խողուն, փշրուող փայլ աղամանդի :

Կանչը, թաւիչ կանաչներուն, թաւ անտառի հրեղէն ձին՝ —
Չորի բաշը, շա՛չը փրփրուն — վրան թառած «Հիւրի Փէրի»ին:

Թողի Ձձուժ հեծնող Ջաղուն եօթ գլխանի դեւի դրան
Ու մութէն լոյս տենչող մարդուն, Մմուռք հաւքի թեւի վրան:

Մի կցկտուր հէքեաթի հետք՝ հեւո՛ւ, հեռու Քարայրէն մութ,
Մինչեւ վանքին նախշուն լեզենդ ու մատուռի լաթապատ սուրբ

Մինչեւ հօտը՝ հովիւը յաղթ, աստուածացած մի քարափում
Դէմը զոհի անշէջ կրակ ու մոզպետը՝ — պահապան շուն .

Մինչև ծաղկած Աստղկան Բերդ, Նարեկայ վանք ծովու դիմաց,
Ծովը իջած Աստղիկը մերկ — Նարեկացո՛ւ պատուհան բաց...:

Մինչև Դաւիթ՝ որբ ու մինակ, Մոկաց Միրզէն թուղթը ձեռին,
Մհերի Դուռ յաւիտեան փակ, մէջը թաղւած թուր Կէծակին:

Թողի՛, թողի Միսէն Մասիս ու Միջագետք փուած կապոյտ
Հնադարեան մի ովասիս, հրաշահոս մի ժողովուրդ ,

Հազարամեայ սերունդների երանգն ու ձև, ձայնն ու շարժում,
Բազմաբարբա՛ո իմ Նայիրի լեզուն անուշ ու իմաստուն...:

* * *

* * *

Ու պղտորւած հոգուս նման, հոգուս նման օձապտոյտ,
Ճամբասկտրեց վերջին անգամ, Արազը յորդ ու յորձանուտ:

Կանգնեց դէմս, որպէս պատուար, որ իմ անմիտ երթը կասի,
Կանգնեց դէմս հազա՛ր, հազար խոկումներով հին Նայիրի:

Բայց իր գունատ դէմքի վրայ, տեսա՛յ արդէն, լեղապատառ
Լաստը չանգռող մի նախագահ, զինաթափւած մի նախարար...:

Մի ժողովուրդ խառնաշփոթ, Տաթեւէն դեռ ճիչը շուրթին,
Որ գազազած՝ ե՛ւ կարեկցոտ, ելք էր փնտուում ու «Ելքի Գին»...:

Ու... վարանած մի ակնթարթ, յետոյ ելած ինքս ինձմէ,
Դարձրած՝ նրան պատառ մի լաթ, որ իմ քրտնած ճակատ սրբէ,

Դրած գրպանս երկրէս մի մաս, խնձորի պէս Արտամետի,
Որ երբ հոգին իմ աներազ սովածանայ, նստի լափի,

Անցա՛յ շտապ իր վրայով՝ որ կարօտով թէ յետ նայեմ,
Իրանի վառ արեւն ու հող, իմ հոգու մէջ խաշխաշ մաղեն...:

Ու թողնելով խելակորոյս, դէմս ելած ծեր Սրազն էլ,
Ինչպէս հողի՝ ձիւնի մի հիւս, հողմաթաւալ լերան մի թեւ՝

— Պայթած անեղ մի փոթորկի՝ մրրիկի մի թա՛փ ու թռիչք,
Հեղեղակոծ անտառների, ամբոխների տազնապն ու ճիչ... :

Ինչպէս ինքնին նիշւած վայրկեան ե՛ւ անողոք, ե՛ւ անխուսափ՝
Ելեքտրական մի կայանի մայր երակէն ելնող հոսանք.

Ինչպէս արդէ՛ն դուրս պրծած նետ, քաշւած լարովն իր աղեղի,
Այնպէս անգուսպ ընթացքիս հետ, թռա՛յ անդարձ ու գնացի... :

* * *

Եւ անխնա՛յ և անզղջում՝ ինչ ունէի լաւ ու անգին,
Հրդեհելով այս խենթ երթում, տալով հողմին ու փոթորկին,

Փշրելով լոյս հոգու մի թեւ, խաժաշուի, կոյս մի հաւատամք,
Զպահելով էլ ոչ մի տեղ երջանկութեան ո՛չ մի պատրանք,

Մրրկածուփ ու ծարաւի մտքերուս հետ հաշտ ու խռով,
Անցայ ամէն ան ու մահի տառապակոծ ուղիներով... :

Անգսպանակ ու խելազար, կոխոտելով արմատախիլ,
Կեանքը պճնող ամէ՛ն համբաւ, փայլուն փոսւքի ամէ՛ն մի ծիլ

Որ աճելով՝ անժամանակ, թարախակալ վէ՛րք է դառնում
Ու այս պայծառ արեւի տակ, ոչ մի ոսկի հասկ չի ծնում... :

* * *

Ու գնացի, ու գնացի. ետեւս աւեր, ինքս աւար.
Ցցւած հազա՛ր պատահարի երկսայրասուր սւխնի ծայր,

Գնացի նոր անկումներու՝ վերելքներու հոօ՛ր թափով—
Խելացնոր աղէտներու՝ ու խնդութեան փոշո՛ւ միջով,

Դէպի ուրի՛շ վատնումի դուռ, սպառումի ուրի՛շ ճամբայ,
Ուր որ հոգին քաղցած ու կոյր գալարում է ինքն իր վրայ... :

Ուր սպասում է ակնդէտ, նրբանցքի մօտ, մահէն հօր՝
Մի այլ անի սարսուռ ու տենդ, զարհուրանքի ուրիշ մի դող,

Որ ձեռքն ընկած ամէն մի շող, ամէն վճիտ երազ ու սէր
Դարձնի իր այդանքուն հսկող, խուլ ու համբցանկութեան կեր... :

Ու գնացի՛ ու գնացի չնայելով այլեւս ետեւ,
Թէ ծեր Սրազ ներեց ինձի, ինձ կը ներեն գալիք օրեր... :

* * *

Ուրի՛շ, ուրի՛շ օրերու պէս, երբ օրս մթնեց ու լուսացաւ
Ու վեր ելայ ընկած տեղէս, որ մի այլ տեղ ընկնեմ դարձեալ,

Գիւղիս ճաթող նուան նման, շողշողո՛ւմ էր դէմս կախւած
Հորիզոնն իր թեւերով լայն ու լեռներէն գլորում ցած.

Արեւն արեան շիթ էր կարծես, կաթած ձիւնոտ լերան վրայ՝
Որ կապել էր մէջքին բեհեզ, ոտքին արծաթ դլխին չալմա.

Հեռո՛ւ հեռո՛ւն, լեռան ետեւ, ուր հորիզոնն էր կորանում,
Աչքերուս մէջ երանգում էր ուրիշ մի լեռ ու համբարձում:

Ոտքերո՛ւս տակ՝ գարնանահալ ու ձիւնախառն մածուցիկ հող,
Բռնել էին արդէն մի պար ու քաշկոտում՝ ինձ ձորից ձոր:

Ու մինչ հոգումս թպրտալով՝ ինչպէս կարիճը կրակում,
Հրկիզում էր ինքն իր թոյնով հնադարեան մի մտածում,

Իր մէկ ծայրը դեռ Արագում՝ գլուխ դրած լերան լանջին,
Ճանապարհս ուրի՛շ տրտում երգ էր ասում իմ աղանջին...:

* * *

Ուրիշ էր տունն ու օթեւան դէմս հիմա ամէն ճամբում,
Ուր թողել էր Աբու Լալան մի անսպառ հարստութիւն,

— Մեղկ մի կենցաղ ու մի դուրան, վրան կքած մի ժողովուրդ՝
Կորցրած վաղուց, իր սրբազան նամազի մէջ, հին մի խորհուրդ:

Ուրի՛շ էին դէմքեր բոլոր, նայւածքները՝ ծո՛յլ, հինայւած,
Քողերու տակ քիչ քիչ մեռնող ժպիտները պարսիկ կանանց...:

Ուրի՛շ էր ե՛ւ ընթացքը իմ, հէքեաթական այս աշխարհում,
Որ տեւ էր Շահն-շահին այնքա՛ն հարեմ ու խնդութիւն:

Այնքան աֆիոն ու վարդի բոյր ու Շախսէի թափօրն արնոտ,
Ռամազանի ազան տխուր, ամէ՛ն գիշեր և առաւօտ...:

Բայց, աչքերումս նոյն մաղձն էր դեռ, սրտիս վրայ, երկրիս փոշին
Ու բռնկե՛ղ, բոցակէզ սէրն Անահիսին ու Արփիկին...:

Նոյն խշրաւող խշռումն էր՝ ծով արտի հասկին, զանգին զնգուն,
Սրտէս ուղիղ, ուղեղս հոսող, պղտոր Արագն ու գիժ Չանգուն.

Նո՛յն էր թախիծն իմ մահադէմ, կսկի՛ծս կոյր, հայրենի տան,
Որ դարձնում էր հոգիս գեհեն և ուղիներս անհանգրւան...:

* * *

Ու նայելով՝ այս ուրիշ նո՛ր, երկրի դիրքին, դէմքին մարդուն,
Ու նայելով՝ նոյն մշտածոր աչքիս մաղձին սրտիս փոշուն,

Յոյսերո՛ւն իմ բեկւած ու որբ, որոնումիս անյագ տենչին,
Անսպաստան ու անամոք իմ կարօտի վերջին կանչին,

Մտրակեցի հոգիս նորէն, դեռ չկցած մի «Զիւլֆայ»ի
Ու մտքիս հետ՝ Անուշ Բերդէն, խորշակատապ վար նետեցի...:

Ճեղքել էր միտքս արդէն մի դար—քա՛ր մի, չնչին ու մամրապատ
Պիսուղո՛ւնն ա՛յն, իր հնափառ արքաներով շղթայակապ...:

Արդէն մի մունջ, անշունչ գիշեր, տառապել էր միտքս արնոտ
Ու չէր գտել խնդուն մի թել, պատմութեան մէջ այդ անողոք:

Հիմա էլ՝ վար, հրածփուն Քիրմանշահի շալլ ուսին,
Վրան՝ կիզիչ թոյն էր մաղում, անապատի դեղին փոշին.

Անապատի շունչը կարմիր, նայւածքը լուռ իր պարապի,
Որի առաջ ի՛նքն իսկ չոքած՝ ինքն իսկ իրմէ կը զարհուրի. . . .

* * *

Ու այս ճաղատ հողաշերտում, ուր ոչ մի կանչ, կանաչ չկար,
Պայթեց յանկարծ իմ աչքերում, մի առասպել դարձած ԱՇԽԱՐԻ

Յանկարծ՝ նորէն իրար ետև ելան ազգերն ու շարժեցին
Իմ նայիրեան երկրէն՝ մինչև Հինդ ու Արաբ ու հեռու Չին.

Դարձրին դարը՝ դարի նշան ու փշրեցին դարը դարում,
Իրար արեան մէջ յողթական, պարտւած իրար արեան ծովում,

Դարձան աւար՝ գերի իրար, իրար ճամբայ՝ կայան փառքի
Ու նոյն ճամբով շիջան՝ դարձեալ վերածեցին անապատի. . . .

— Զարմանքիս պէս, լուռ, անայլայլ, զարմանքիս պէս մի անապատ
Որ սփռում էր դէմս՝ ծարաւ աւազներու ոսկի ձանձրախտ:

* * *

* * *

Ու թւաց ինձ, ինձմէ առաջ, դարեր ամբողջ զուր են անցել,
Ու թւաց ինձ, զո՛ւր, անիմաստ մի անցկացող դա՛ր եմ ես էլ,

Ու դեռ նրա՛նք, որ չե՛ն եկել, որ պիտի գան գոհ թէ դժգոհ,
Նրանք բոլոր արդէն եկել՝ անցել են զուր ինձմէ յետոյ:

Ու թւաց ինձ, թւաց նաև, երբ սթափւած շուրջս դարձայ,
Զուր էր ընկերո փռում առջևս, Սայաթ Նովէն՝ մի մանանայ:

Քուչակը ծեր՝ մի ումպ գինի, Գողթան Երզնի տաղերը հին,
Մի տրտում տո՛ղ Շարականի ու Նարեկի խորհո՛ւրդք խորին. . . .

Զո՛ւր էր, անմի՛տ հիմա բոլոր, հիմա խորշա՛կ անապատի
Ու խորշակում՝ ահա Տէր-Զօր

Ընթերցող թո՛ղ այս տողն անցնի:

* * *

. . . Ու ծառացած ինքս իմ դէմ, — աչքերուս մէջ սարսափահար
Այս մզկիթի մինարէթէն կախւած, ճօճևող Հայո՛ց Աշխարհ. . . .

Յետ-յետ գացի, դարձա՛յ կրկին հողուս յետին ոտքի վրայ
Ինչպէս մեր այն հէքիաթի ձին — վրան կպած տէրը նրա:

Ու դեռ չեղած նորէն գիշեր՝ Արեւելքը թողած հեռուն,
Արեւի հետ իջայ ես էլ, Արևմտեան ճահիճներում . . . :

* * *

Եւ ուղեղիս լաթի նման՝ ծալած քարտէզն անջրպետի
Փռեց դէմս իր բազմազան ուղիները հարցականի :

Կեանքի գիծը, նրանց ցանցում, գորշ ու ճապաղ կէտ էր միայն,
Որ սկսւած ի՛ր իսկ տեղում, վերջանում էր անսպասուխան . . . :

Կանգնած կեանքի այս գորշ կէտում՝ ուրկէ անդին չկար ոչինչ,
Տեսայ կրկին իմ մանկութիւն ու նայիրեան երկինքը յինչ . . . :

Երկիրը՝ կոյս ու արգաւանդ, ուր ես կարծես ահա նորէն
Գլխիս դրած արեւը, թագ — մի խաշնարած թագաւոր եմ :

Վերը ինձմէ, ինձմէ հօրը, նախնիքներու բարին Աստուած՝
Ու վարը՝ ե՛ս, իմ տանը շող, հազար մի աչք վրաս գամւած . . . :

Գահս՝ ահա՛ գիւղիս լեռներ ու ծիածանն իմ ծիրանին,
Ոտքիս՝ ոսկի մուճակի տեղ, մի գոյգ տրեխ մազոտ ու հին .

Գայիսոնս՝ կախարդական ինը տեղով դաղւած, նախշուն,
Մի սրինգ է, որ լալաճայն սար ու ձորին երգ է ասում . . . :

Ժողովուրդն իմ, հօտն իմ ահա, որոճացող ու միամիտ,
Գիւղը տանող ճամբու վրայ, աղբիւրի մօտ աղանակիտ .

Գովը՝ միակ հաւատարիմ ու մտերիմ շունս անբաժան,
Սեղանակից ընկերը իմ ե՛ւ իմ պահակն սւ թիկնապահն . . . :

* * *

Օ՛, լուսաթև ու կապտաչւի իմ մանկութիւն, իմ պարզ աշխարհ,
Նախնական իմ մտածումի, երազներու պատի՛կ քնար,

— Տա՛ր, սիրտս տար նորէն, նորէն ու զա՛րկնրան ամէն քարի .
Թող ուղեղումս վերքեր բացւեն ու կարօտդ հոգիս այրի :

Տա՛ր ինձ, կրկին նետիր մի ձոր տանող կածան՝ ու արահետ,
Ուր ամէն ծիլ, ծաղիկ ու շող խաղ է արել իմ հոգու հետ .

Մի տեղ նորէն սրինգ ածեմ, օձն ու մողէս քովս սողան,
Մեզունեցը դա՛մս պահեն, ժայռի ճեղքում, մեղրի վրան,

Վերէն՝ արջը քար գլորի, արձագանգը փշրի ձորում,
Ձորէն՝ ապշած դէմս ելնի, խրտնած երա՛մն եղնիկներուն... :

Գիշե՛րը գայ. աստղերն հատ հատ ժողեմ՝ նորէն իմ աչքերում
Ու երազում՝ երազի՛ս հետ շաղ տամ բոլոր գիւղիս կալում... —

— Մէկը՝ իմ տան դրան վրայ, յետոյ, գիւղի եկեղեցում,
Որ մոմի տեղ միշտ վառ մնայ քահանայի պատարագում.

Աստուած վերէն՝ ուրախ նայի, թափի իր սէրն ու բարութիւն
Առատ բերքով տարի՛ լինի, լինի հարսնիք ու խնդութիւն:

Ու մի աղջիկ — թաղիս Շուշան, Աստուածամօր նման սիրուն,
Մեծնա՛յ, փթթի վարդի նման, հասակ նետի մի գիշերում,—

Դառնայ բէրւոր, գա՛յ բէրատեղ, գառը գրկած ժպտա՛յ, ժպտայ...
Սրինգ շուրթիս դրած, ես էլ, նւագեմ ու... չվերջանայ... :

* * *

Ահա գի՛ւղն իմ, տո՛ւնն իմ ահա — իմ օրօրոցն ու ճօճանակ,
Կախւած ձորում, գետի վրայ — ինքնին տեսիլք, ինքնին հրաշք,

— Յուռո՛ւ լթք կապոյտ իմ երազի, հմայիլն իմ, խորունկ խորհուրդ,
Մազէ կամուրջ ամէն բանի, ամէն բանի իմ լուսամուտ... :

Օ՛, գի՛ւղն, իմ գիւղ, կարօտների փեթակս Ամրան, Աշնան՝ ամբար
Զմրան՝ ծաղկած մի նշենի՛, նշենու տակ տաքո՛ւկ փարախ —

Ներաշխա՛րհն իմ, չո՛յսն իմ մանկան Մեթէրլինկի կապոյտ թռչուն
Որ դողացիբ անեզրական՝ Պասկալի մութ պարսպներում.—

— Ահա տատս թոնրանդ շուրթին՝ թոնրէդ փլած հացի մի կուտ
Օճախիդ մէջ, վառուղ չամին ու չամու հետ՝ պտղունց մի խո՛ւնկ—

— Տաշտդ օժող մի ջաղացպան, հարիւրամեայ մի տանուտէր,
Արեւապաշտ Խալդի տղան—հի՛ն, իմաստո՛ւն գիւղիս մեծեր,

Ամէն մէկը՝ մի Շէյքսպի՛ր, ամէն մէկը՝ ծեր մի Կէօթէ
Ամէն մէկի սրտում՝ անգիբ հազար կոնդակ մազաղաթէ.

Կրակի՛ պէս՝ խանձող ու վառ, երգ ու հէքիաթ չիբուխներին,
Փռե՛լ են դէմս հրաշափառ, պապիս պապի լուսէ հոգին... :

Ա՛նց են կացրել սիրտս նորէն թելի վրայ մի համրիչի
Որ կանգնում է, շարժում՝ ամէն մի բառի հետ ասւած խօսքի

Ու գլխիվար սահում՝ մինչեւ քաղցր դողէս սառած զարմանք
Ու զարմանքէս՝ մինչեւ անձեւ ու տօթակէզ մի զառանցանք...

Ու դառնում է, դառնում նորէն, իմ ուղեղի լաթի վրան
Իր գոյնզգոյն ժապաւէնով հնադարեան այս սինեման,

Ու կենդանի՛ ինչպէս այնտե՛ղ, կրակի քով փլած մարդիկ,
Տո՛ւն են դառնում գերեզմանէն, նստում՝ նորէն ծալապատիկ,

Կարն ու Չկար ձեւակերպում՝ կապում կտրած մի թելի մաս,
Եւ աչքերուս մէջ շարմազում՝ մի իօխանի վերջին մուրագ:

0072
75-98111



—Վերջին, վերջին մուրազն ու սէր: ծարաւը ծեր մի իշխանի,
Որ ապրել է դար՝ ու դարեր — ինչպէս երկիրն իմ Նայիրի,

Ոմ եղել է մեծ ու հզօր ու յաղթական իշխել կեանքում,
Ասուածներու նման, ա՛յն որ արձանացան ամէն ճամբում...

Որի օրով՝ շէ՛ն ու խաղաղ ապրել են գոհ ու անցկացել,
Որպէս պայծառ մի երեկոյ, ազգեր բազում ու սերունդներ...

Ու անա դէմս, կարմիր, կարմիր կրակի քով իմ պապերի,
Տեսիլիս մէջ որպէս տեսիլ ու լոյսի խաղ ակնթարթի,

է՛ն «փղոսկրէ պալատը»՝ ուր «թառել է լոյս տուող թռչուն »
Ու պալատի պատերը կուռ, որոնցմէ մեղմ «երգ է ծորում...»:

Գահի վրայ, արքայական՝ ինքը իշխան, լոյսը դէմքին,
Բաժանում է իր հայրական խօսքն ու կայքը զաւակներին.—

* * *

Ձաւակներն էլ, անա՛ արդէն մէկ-մէկ աշխարհ, ծաղկած գարուն,
Մեծը՝ առած իր թագն ու գահն, իր անսպառ հարստութիւն,

Միջնեկը՝ սուրն իր սրբազան, իսկ փոքրը՝ մի մաշած տաւիղ,
—«Ենում» Քամու ձի են նստում ու սլանում երկրէ երկիր

Մինչեւ՝ գտնե՛ն Շահրուր հաւքի հետքը մի տեղ բռնե՛ն նրան,
—Անմահական ջինջ աղբիւրի երջանկածոր ա՛կը բանան

Ու մի կաթիլ առած՝ կրկին դառնան իրենց երկիրն ու հող
Որ հայրն առնէ մուրազն իր հին ու մենք էլ մեր երեք խնձոր:

Ու մինչ հոսում է ժամանակ, վայրկեանի պէս դարն է անցնում
Փոշին նորէն դարձնելով մարդ ու մարդ՝ փոշի՛ այս աշխարհում,

Մինչ հայրենի դրանն աւեր, շինքը ծուռ, աչքը ճամբին,
Հի՛ն հրաշքով մնո՛ւմ է դեռ, ճղակոտոր այս ուռենին,—

Այս առասպել իշխանը-մեծ՝ պապիս դէմքով ու հասակով
Որ մանկութի՛ւնս էլ օրօրեց, անա ա՛յնտեղ կրակի քով,

— Ձաւակներն իր արիւնաքամ, դնում՝ հասնում են հեքեաթի
Սյնտե՛ղ, որտեղ այլեւս ճամբան, բաժանւում է երեք ճիւղի,

Որտեղ՝ վաղուց մի ուղեւոր անմահական ջրին ծարաւ
Եկել՝ ընկել էր դարերով ու մարմնէն վա՛ր դարձել էր քար.

—Քա՛ր էր դարձել այս հանգոյցում, բայց եւ սորովել զաղանիքը այն
Թէ ո՞ր ճամբան, ո՞ւր էր տանում եւ ո՞ւր էր ջուրն անմահական...

Որտեղ ե՛ւ ես անա կանգնած նայում եմ դեռ ու մտորում, 
Մինչեւ հանգի ամէն մի կայծ այս տեսիլքում եւ իմ հոգում...

—Մինչեւ տանե՛ն-պապերս, նորէն, զաւակները ծեր իշխանի,
Ճամբաբաժան այս դելթայէն, նետեն ուրիշ մի դելթայի,

Ձգելով՝ մեծն իր ոսկիով, էն լայն ճամբով սովորական,
Որով գնում են ապահով ու յետ գալիս փառքով աժան.

Սուրն ունեցող միջնեկ տղան՝ միջին ճամբով՝ ճամբաներուն,
Որ գժւար է ու հարցական գարձը գւարթ կամ թէ տրտում.

Տաւիղի տէր կրտսերին էլ բաց մնացած փշոտ կածան
Որով անցնող յետ չի՛ եկել, չի՛ իմացել նրա վախճան...

Ու բաժանւած՝ սրանք երթան՝ այնքան, մինչեւ նորէ՛ն, նորէն
է՛ն կէսը քար պապի նման, յուսալքւած ետեւ նային.

Տեսնեն հայրը դեռ իր դրան, Շահրուր հաւքը գլխի վերեւ
Ու քովը՝ շո՛ւրն անմահական, ժայռից բխած, որ չե՛ն տեսել...

Նայե՛ն, նայեն ու տոչորեն, կարօտակէզ ու ծարաւի
Ու ցանկանան ու չհասնեն—յաւէ՛տ անհաս եւ ո՛ւշ լինի...

* * *

Ո՛վ, իմ ցեղի՛ բարի՛ հայրեր, ով նախնիքներդ իմ հայրերուն,
Որ լոյս դարձաք ու լոյսի սէր, կաթած երկրիս ամէն անկիւն,
Խառնւած օդին ու ջրերին, հողին, հողի հունտին ճաթող,
Ծլարձակող կանաչներին, ծառին, ծաղկին հազար գոյնով,

—Լեռներէն՝ ձոր, արտերէն՝ կալ, շողշողալով ու թրթռուն
Կայլակելով հնչիւն ու բառ շուրթերէ-շուրթ ու տնէ-տուն,

Որ մարմնացաք՝ որպէս մի բերդ, մի վանք, մի դաշտ ու սրբավայր,
Որպէս մի ծով ու ծփուն գետ յորձանքւելով դարերէ դար,

Ինչպէ՛ս նետեմ ձեզ ամենուն հոգուս անբառ ճիշդ վերջին,
Որ չպայթի սիրտս այդ կանչում, որ ինքս ինձմէ՛ չսարսափիմ...

Որ դեռ մնա՛ տեսիլը ձեր, կրա՛կը ձեր նուիրական,
Ու դէմս փռէ լուսէ գծեր, օրերում՝ դեռ որ պիտի գան

Ու դուք՝ որպէս երազ անգին, կոպերուս տակ դառնակսկիծ
Դարձնէ՛ք, ներէ՛ք կէս Քար ծերին, Երեւ Եղբօր և ի՛նձ և ի՛նձ...

* * *

Կծկւելով ինքս ինձ վրայ, արդէն յանձնած կեանքս «Փօրդ»ին
Վերջին անգամ ես յետ դարձայ ու նայեցի Արեւելքին:—

Արեւ չկար. բայց լոյս էր դեռ ու լոյսի մէջ իրիկնային
Անապատն էր ետեւս ընկել ու կրնկոխ վազում կրկին. —

Գալիս էր նա որ մարդկային կմախքները՝ «Փօրդ»ը նետի,
Որոնց միջով՝ անցնող քամին, ստեղծել էր մի մեղեդի,

Որոնք՝ կարծես իմ աչքերում պսպղալով վառում էին
Եւ Արեւմուտքը ողողում, իրենց լոյսով Փօսֆօրային...

Գալիս էր նա... բայց և կրկին՝ թւում էր թէ փախում էր յետ
Եւ աղօտում՝ իրիկնային աղջամուղջի ու լոյսի հետ:

Ու այդ վազքում՝ նահանջում այդ կարծես ընկած գալարում էր
Կորաքամակ ու յուսաթափ մի մարդկային շարժուն սուեր.—

Կարծես, նորէն Մահարին էր, որ այս անգամ յետ էր դառնում
Որի սիրած «կարաւանն» էլ հիմա չկա՛ր, չէր «ղօղանջում»

Որ՝ աչք յառած՝ հիմա մթում՝ դէպի աշխարհն այն վաղեմի
Սյն «զմրուխտէ ու կոյս հեռուն» որ ես դեռ նո՛ր թողել էի,

Գնում էր լու՛ռ, մինակ ու ծեր, բայց իմաստուն, բայց և արի՛
Որ հոն թողած մանկութեամբ դեռ, իր ջաղացի դուռը նախի...

* * *

Ու մինչ Փօրդը պեղելով դեռ թանձր աւազ, յետոյ խաւար,
Քթէս բռնած քաշկաւում էր՝ ու տանում ինձ մի ա՛յլ աշխարհ,

Միրտա՛ կատրած ինչպէս մի շուն դուրս էր պրծնում կրկին, կրկին
Հոտոտելով իջնող մթում հետքերը ետ դարձողներին

Ու ոռնալով կողկանձելով ընկնում նրանց ետեւներէն
Նո՛յն արեւոտ կածաններով, նո՛յն միամիտ սիրով նորէն...

— Երկու հսկայ ու հաւասար ուժեր էին, որ ինձ լծւած
Քաշում էին միասնաբար, դեռ շա՛տ երկար յէՏ ու առաջ:

* * *

Օրս այնպէս անլոյս էր՝ թա՛ց բացւել վրաս կայարանում,
Որ սառել էր ամէն մի հարց ու կախ ընկել իմ աչքերում,
Պա՛ղ աչքերով նայում էի շուրջս շտապ շարժող մարդկանց,
Ինչպէս քարը՝ մի անցորդի ճանապարհի վրա ընկած.

Օրւան պէս էլ՝ նրանց լեզուն, ձեւերը խորդ՝ անհարազատ,
Վրաս անձրև էին տեղում՝ ու հրում ինձ դէպի գնացք...

. . . Ո՛ւր էի ես, ինչո՞ւ եկել, ինչպէ՛ս և ո՞ւր էի գնում.—
Անպատասխան տխո՛ւր հարցեր, անմիտ հարցեր երկաթուղու—

Հարցեր՝ որոնք գնացքն արդէն կլանում էր ինչպէս ածուխ,
Ու չչալով նետում իմ դէմ միայն մոխիր մշուշ ու ծուխ...

— Ընկերներէս մէկը՝ ուրախ իր տաս ոսկով՝ հաշւում էր դեռ
Երեկոյեան կը նստի նաւ, ուզի՛ Աթէնք, ուզի Մարսէյ...

Միւսը գո՛հ՝ որ «գնել» էր դեռ Բաղդադում մի «տուփ սիկար»
Իր հոգու պէս «պինդ պահում» էր որ «Հայաստան դարձին» բանար:

Այսքան միայն, ուրիշ ոչինչ, ուրիշ, երկար ու խորունկ քուն
Ու քնի մէջ անորոշ ճիչ կամ գնացքին՝ կամ իմ հոգուն...

* * *

Ես չգիտեմ թէ հիմա ո՞վ ուր է հասել, ո՛ր մէկ ծովում
Ո՞վ է խարիսխ նետել եւ ո՞վ դեռ յուսաբեկ թիավարում.

Ո՞վ որքան զուր հուր է վատնել թաղել քանի՛ երազ անգին,
Եւ ի՞նչ մի նոր բան է գտել, որ չի՛ կորցրել նոյնքան ճամբին...

Բայց ես՝ իմ գորշ ներկան անդէմ, ուր որպէս մի խնդուն գալի՛ք
Երազեցին երկրիս ծոցէն թոռներէ թոռ անցած որդիք,

Ես՝ իմ ցեղի Բրիտանիկոս, վերջին կաթիլն իր արիւնէն,
Որին այլեւս ոչ մի Տիտոս էլ չի՛ կարող փրկել նորէն,

Հիմա եկել՝ ու կօնգորտում՝ կոկորդիս մէջ լսեղբած մի բառ,
Քաղաքակի՛րթ իմարդկութիւն քո «Հաշտութիւնն» ու լուսէ դար,

Լո՛ւռ, ինչպէս քարն այս սեպածեւ, այս աւարը պատերազմի.
Կանգնել եմ մե՛րկ, որ մի անասէր պառաւ պոռնիկ վրաս հրձե՛ի...

Կանգնել եմ մե՛րկ, իմ արնաներկ իմ չհանգած ու բորբոքող
Օրերո՛ւս հետ, յոյսերուս հետ, վէրքերուս հետ բոլոր, բոլոր

Ինչ որ մնաց մտքիս վրայ, աչքերուս ծայր, սրտիս զարկում,
Ճամբաներէն որով անցայ, երկրէս մինչեւ երկրիս խոստում...

Արեւելեան աւարեմ նոր, ինձ բերել են Սեւր - Լոզան,
Ներկաս նիշած ոսկի գրչով, Վերսայլ հասնող այս հին ճամբան,

Որ ճամբաներ բոլո՛ր, բոլոր որ չեն տանում հիմա Հոռո՛
Որոնք՝ ինքնին ամէն մէկ նոր մի Հոռո՛ է ու մի Ներոն.

Որոնց ամէն մէկի միջեւ կամուրջի պէս Սէնի վրայ
Խոնարհւել են իրար ետեւ նաեւ հազար մի Սենեկա,


Անտահանված է 1957թ.

Կապելով մութ նկուղը, նոր ամենազոր Հօկուստայի,
Մանածապատ նրբանցքներով Վերսայլի—նոր այս Պոլլուքսի

Այստեղ եմ ես հասել մինակ, կանգնել անա ու մղկտում՝
Սողոմոնի ու Յորի չափ — երկիրը իմ քո թշուառութիւն,

Որով՝ փարթամ պիտի ցոլայ ու ցոլացնէ վերնիի պէս,
Այս սեւ սաթի ֆօնի վրայ, դարերէ դար անցնող մի ծէս,

Ուր թաղելով քո հին երազ, թոքախտաւոր ու դիւթական,
Աչքերուս մէջ նայո՛ղ տղաս, կարդա՛ պիտի իր Ապագան... :

Գրած՝ 1927.ին, Բրիւսել - Փարիզ ԵՊԳ




<< Ազգային գրադարան

NL0359056

39656

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

«Հեկեկաններ» 1915 Երևան [սպառած |
«Զրիլիի երգեր» 1921 Թուրիզ [սպառած |

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

«Արձագանգներ»
«Երբսում»
«Արբունի»
«Տեսիլներ»
«Զարթոնի»
«Լուսեղեն ձամբից»

Գ Ի Ն 5 Գ Ր .

Դ Ի Մ Ե Լ .

ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ - ՍՍՄՈՒԷԼ

51, Rue Monsieur-le-Prince - Paris

Կամ հեղինակին՝

Ս. Ohannessian, 29, Rue Gay-Lussac, Paris

